



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ**  
**ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 14 Յունիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Սուրբ Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին:

Տարիներու աւանդութեան համաձայն, Պատարագին ներկայ պիտի ըլլան Մեսրոպեան Ազգային վարժարանի 12-րդ կարգի շրջանաւարտները, Ս. Հաղորդութիւն պիտի ստանան եւ պիտի լսեն Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազանը այս շաբաթավերջին կը վերադառնայ Լիբանանէն, ուր նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, 3-5 Յունիսին, Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուեցաւ Ազգային Կեդրոնական Վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներու լիակատար նիստերը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT**  
**HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO**

On Sunday, June 14th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and will deliver the sermon.

In keeping with a years-long tradition, the graduating class of Armenian Mesrobian School will attend Divine Liturgy and will receive Holy Communion by the Prelate.

The Prelate will return from Lebanon this weekend where he has been participating in the meetings of the Holy See of Cilicia Central Executive Councils, presided over by H.H. Catholicos Aram I.

\*\*\*

**A JOURNEY TO ARMENIA ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ**

Ուրբաթ, 12 Յունիսի երեկոյեան, կազմակերպութեամբ Real Medicine Foundation-ին, հանգանակային եւ նկարչական ցուցահանդես մը տեղի պիտի ունենայ Զոլիվուտի Նկարչական կալերիային մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ *A Journey to Armenia* խորագիրը կրող ձեռնարկին, եւ պիտի փոխանցէ Սրբազանին օրհնութեան խօսքը:

## **PRELATE TO BE REPRESENTED AT FUNDRAISING RECEPTION OF THE REAL MEDICINE FOUNDATION**

The Real Medicine Foundation, an organization that provides humanitarian assistance and relief to poverty and disaster stricken areas, will be hosting a fundraiser on the evening of Friday, June 12<sup>th</sup>, to benefit the Shinuhayr health clinic in Armenia.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate at the photo exhibit *A Journey to Armenia*, which will take place at the A & I Photography Gallery in Hollywood, and will convey the Prelate's blessings.

\*\*\*

## **ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԶԱՄԱԳՈՒՄԱՐ**

Յովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդին, առաջնորդութեամբ Զայ Առաքելական եկեղեցւոյ զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտրեանի, Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Զափլան Արքեպիսկոպոսի եւ Ղըպտի Ուղղափառ եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի, ու կազմակերպութեամբ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Երիտասարդական Յանձնախումբին, Շաբաթ, 20 Յունիսին միօրեայ հաւաք մը տեղի պիտի ունենայ Փասատիսայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ յիշեալ եկեղեցիներու երիտասարդական խմբակներուն:

Զամագումարը պիտի սկսի աղօթքով, տեղի պիտի ունենան խմբային աշխատանքներ եւ լսարաններ: Եկեղեցիներու ներկայացուցիչ-հոգեւորականները դասախօսութիւններ պիտի ներկայացնեն, ապա տեղի պիտի ունենայ հարց ու պատասխան:

## **THIRD ANNUAL ORIENTAL ORTHODOX CHURCHES YOUTH SPIRITUAL GATHERING**

On Saturday, June 20<sup>th</sup>, the third annual Oriental Orthodox Churches Youth Spiritual Gathering will take place under the auspices of the Council of

Oriental Orthodox Bishops headed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Church), and H.G. Bishop Serapion (Coptic Church).

The gathering will take place at St. Gregory Armenian Church in Pasadena, from 10:30 a.m. to 4:30 p.m.

Youth from the three Churches will participate in the gathering which will include morning prayers, remarks by the four spiritual leaders, and discussion sessions led by clergy from each Church.

\*\*\*